




THE
DICKRIS PUBLISHING CO.
628 Third Avenue,
NEW YORK CITY.



ՏԻՔՐԻՍԻ ՍԻՒՆԱԿՆԵՐԸ ԲԱՑ
ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԷՆ ԱՌՋԵՆԻ:

ՏԱԲԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ՓՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 5

ՆԻՒ ԵՈՐԲ, ԴԵԿՏ. 11, 1897

ԳԻՆ 3 ՍԷՆՑ

ՕՐՈՒԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Վերջին քանի մը օրերուն մէջ քաղաքականութեան ասպարէզին վրայ օրուայ գիւցազնը Համախի լուսադրերն—Վիլհելմ Կայսրն—է: Իւր սրբութեան սիրտը փոխելու չափ ուսած է, տեսնելով որ Արևածագի երկրէն, Չինաստանէն մինչև Արևմտեանի անկիւնը՝ փոքրիկ կղզիներ կը ստական իւր աշունի նաւատորմիդէն, և թնդանութի հարկաւոր դրողներուն կողմէն զոհուած իր լաթի կտորը: Բարեպաշտ Գրիստոնեայ Կայսրը, որ Հայկական կոտորածներուն ժամանակ ալ բազուկը կը դրուէր Մուհամմատապաշտ եղբորը, և Բրուսի թնդանութեան հետ առաջնակարգ պատերազմիկներ զրկեց Հայաստանի Գրիստոնեայ Յոյներ ջարդելու համար, քանի մը օրէն ի վեր գիշերուայ քունը վրդոված՝ չըկրցաւ հանդուրժել 2-3 տղետ Չինացիներու 2-3 Գրիստոնեայ Գերմանացի Միսիոնարներ սպանելուն համար: Իսկոյն հրամանը արձակեց, ժողովրդի աչքը կուրցնելով, որ երկու հաս պատերազմական թոշին Չինական ջուրերը՝ առանց զիւսանալու պահանջներուն և ձեռնարկութեան իր կատարելու: Վիլհելմի ձագերը գրաւեցին Չինաստանի կարեւոր նաւահանգիստ մը, և անոր ետեւ հողերէն մաս մը, բայց ըստի Գրիստոնեայ Կառավարութիւն մը չէր կրնար, անտարակոյս, անտարբեր մնալ Գերմանական այս կրօնասիրական եռանդին առջև: Ուստի Չարի Կառավարութիւնը կը յայտարարէ թէ եթէ Բողոքական Գերմանական այնքան մողեսանդ է որ իսէր Աւետարանի կը գրաւէ Հիւստոնի երկիրը, Ուղղափառ Կառավարութիւնը կը պահանջէ որ կամ ետ տայ գրաւուած երկիրները, և կամ ինքն ալ աւելի մեծ բաժին մը կողոպտէ յանուն Գրիստոնի:

* * *

Վիլհելմը, ո՛չ միայն ջերմանալով քրիստոնեայ մընէ, այլ նաև Հայաստանում Հայկականութեան վեհապետ մը իւր սրտակից բարեկամին՝ Համախի պէս: Հայթի կղզիին մէջ Գերմանական հպատակ մը անիրաւ տեղը կը բանտարկուի: Գերմ. նաւերը անցանք օր միւսնայ արագութիւնով Հայթի կղզին պաշարեցին, և պահանջեցին արտակարգ տուգանքներ, հակառակ պարագային սպաննալով որմբակոծել Հայթի Մայրաքաղաքը: Անպաշտպան կղզիի փոքրիկ Հանրապետական Կառավարութիւնը ընդունեց ամէն առաջարկութիւններ, և ամենայն խոնարհութիւնով բարեկց Գերմանական զորաւոր, վճարելով միւսնայն ժամանակ հազարաւոր սուրբներ աննշան Գերմանացի մը, որուն

նմանները ամէն րոպէ՛ կը ջախջախուին Գերմանացի մէջ հպատակասէր Կայսեր կողմէն:

Բայց ամէն բան կը պարզուի Վիլհելմի Արտաքին Գործերու նախարարին անցեալ օր ըրած սա յայտարարութեան մէջ:—«Ուրիշ ազգեր տիրեցին ցամաքներուն, և ուրիշներ ալ տէրերը դարձան անձայրածիր ջուրերու, իսկ մեզ մնաց երկիրներ կապոյտը միայն, ուրտեղ վարդապետութիւններու միայն կրնանք տիրանալ:

* * *

Հակառակ Գերման Կայսրին փառապանծ յաղթանակներուն, Աւստրո-իայի Մերունի Կայսեր Համար ըստական լից և աղետալի օրեր եղան վերջի երկու շաբաթները: Չրանս-ժողով Կայսրը ու Կայսրուհին գահակալութեան տարեդարձի խրատմանը ազդեցութեան տակ, սրտի խորունկ հառաջանքով սկսան մտածել թէ յաջորդ տարի արդեօք գահ մը պիտի ունենան տօնը խնջարներով յիշատակելու:

Չինացիներ և Պոզէմիացիներուն անհանուն դժգոհութեան, բողոքներուն և ցոյցերուն դրողութեան էին որ ամբողջ շաբաթ մը վրդովեցին ամբողջ երկրակ թագաւորութեան հիմերը: Դժգոհ յեղափոխական Պոզէմիացիք սիրտ սրտի կուռեցան Վիլհելմի և Փրակի փողոցները՝ Աւստրո-իական զինուորներուն հետ: Կայսրը տեսաւ իւր Մայրաքաղաքին մէջ հոսուած կարմիր արիւնը և ստակաց, տեսնելով Հայաստանի Ծան մտաւրուտ անկումը: Իւր քովը կեցած նախարարին ըսած է թէ՛ «աշունի է վիճակինս, ժողովուրդը դժգոհ կը թուի»:

Չի գիտցուի թէ նախարարը ինչ պատասխանած է, բայց ինչ ո՛չ է յիշած Գաղղիացի նախարարի մը պատասխանը, որ համանման պարագայի մը տակ փակցուցած է իւր Վեհապետի երեսին, երբ վերջինը՝ գիտելով Փարիզի ժողովրդի ցոյցերը յեղափոխութեան ժամանակ, ըսած է նախարարին.

—Օ՛հ, սոսկալի է. ժողովուրդը պատասխանութեան մէջ է:

—Ո՛չ Տէր Արքայ, պատասխանած է նախարարը, յեղափոխութեան մէջ է:

* * *

Իտալիոյ մէջ նախարարութիւնը կը հրաժարի սակայն ճիշտ մէկ ժամ վերջը միւսնայն Կառավարութիւնը գործի գլուխ անցնելու հաստատ գիտումով: Իտալիոյ աղքատացած արեստեակները բացարձակապէս անկարող է կրելու ներկայ զինուորական ահազին ծախքերը: Ժողովուրդը կը բողոքէ և կամ յուսահատ կը գաղթէ:

Ժամանակ առ ժամանակ Հումպերթի խորհրդատուները ժողովրդին հետ աչքեկապուկ կը խաղան, մէկը սրբողած կը քաշուի հրապարակէն. ուրիշ մը կուգայ ալ աւելի ծախքեր պահանջելով արիւնը քամուած ժողովրդէն:

* * *

Նիւ Եօրք Հէրըլտի Գործընթաց-թակիցը սկսաւ Հայաստանէն զրկել իր թերթին քրիստոնէի մը աչքով տեսած իրողութիւններու տեղեկագիրները, որոնք մասնաւորաբար կը սեցընեն Հէրըլտի անցեալ կիրակնօրնայ թերթին էջերը: Մինչև հիմակիսօք մը անգամ չը կայ հազարաւոր ջարդուած Հայերու մասին, սրախոխուում և մանուկներու և առեւտուում կոյսերու վրան: Տքթ. Հէփուօրթի Սամսոնի, Կիրասոնի, Տրապիզոնի և Կարիսի մէջ գտած է Թուրքերը հեղահամար, ազնիւ, հիւրասէր, գթասէր, և անմեղ՝ տգիտութեան մէջ ապրող արարածներ: Գրիստոնի աշակերտ թղթակիցը շատ հմայիչ զըսած է թրքական գլխիչ կանգը այդ վայրերուն մէջ: Ինչպէս կարելի է չհաւատալ այս տեղեկագրուած լուրերուն, երբ թղթակիցին կրնիք անան պաշտական երկու Պէյեր, որոնք իրեն վկայութեան կը կանչէ թղթակիցը հաստատելու համար իր կարծիքը, որ կազմած է տեսակցելով տեղական թրքամոլ ու կէս թրքացած հրեայ գերմանացիներու, անգլիացիներու և գաղղիացիներու հետ:

Հ Ե Ռ Ա Գ Ր Ա Ն Ո Ւ Ր Բ

Էրզրում, Դեկտ. 6.—Հերըլտի Աւստրո-իական կուռնայ այստեղ, իւր ուղղեցոյցի հիւսնդութեան պատճառով: Երկիրը գետին իրար կ'անցնենք ասից հեռանալու համար: Պիթլիսի լեռնային անցքերը գոցուած են. ո՛չ կարգաւ և ո՛չ ալ սուրհանդակ կըրնան անցնիլ. այստեղ ճիշտ հիմայ հասնող մարդ մը կըսէ թէ 14 օրէն հազիւ կըցած է 28 մղոն տեղ ճամբորդել: Պատրաստ ենք ճամբայ ելնելու, եթէ անցքերը բացուին. միւս ճամբան, այսինքն էրզրակեանի և Նարբերդի վրայով, աւելի երկար է, բայց իբրև վերջին յոյս պիտի փորձենք:

Կարևոր թուղթեր ձեռք ձգած եմ Հայկական խնդիրին վերաբերող մասնաւորաբար վաւերական յեղափոխական թուղթեր, որոնք թղթատարով ձեռք կը զրկեմ:

Երկիրը վերջին ծայր հետաքրքրութեան մէջ է Հերըլտի առաքելութեան մասին: Երկու կողմէն կուգեն իրենց դատը ներկայել:

Լոնտոն, Դեկտ. 10.—Տէյլի Բրոնիքի Աթէնքի թղթակիցը կը հեռա-

գրէ թէ, անցեալ երկու շաբաթի ելուտը մէջ սպասաւորող երկու զինուորներ փորձեր են սպաննել Սուլթանը:

Նորին վեհափառութիւնը հրամայել է զինուորները ստակալի կերպով չարչարել, յուսալով որ կը խոստովանին ուրիշ մեղսակիցներու անուններ, բայց երկուքն ալ մեռան առանց բան մը ըսելու:

Սր. Բեթէրպուրկ, Դեկտ. 10.—Ամբողջ Ռուսաստանի մէջ Մահմետականները յուզման մէջ են. այս կը վերագրուի Սուլթանի վերջին Յուստոստանի վրայ տարած յաղթութեանը:

Կառավարութիւնը կը կարծէ նոյնիսկ թէ, վերջերս կովկասի մէջ երեցած Մահմետական առաջակներու խուճերը պաշտօնեաներու դէմ ուղղուած են: Վտանգը այնքան ըսպաննալից է որ կովկասի Կառավարչները խորհրդակցութիւն մը ունեցած են միացեալ միջոցներով խաղաղացնելու կովկասը:

Միջին Ասիոյ ճամբորդները կը յայտարարեն թէ Մահմետական տարբեր ցեղեր այժմ սիրով կ'ապրին իրարու հետ, և կը յայտարարեն թէ իրենք ամէն բանէ առաջ Մահմետական են՝ իրենց գլուխ ունենալով Սուլթանը:

Յայտնի է թէ ամենափոքր դէպք մը կրնայ առաջ բերել պատամբութիւն մը, որով Ռուսիան պիտի իյնայ նոր նեղութիւններու ովկանտոսին մէջ, ինչպէս որ է Անգլիան Հընդկաստանի մէջ:

ԱԶԳ

Այլ և այլ կողմերէ նամակներ կուգան մեզ Էլիսա Պալաթ Ընկերութեան հրատարակելիք բառարաններու մասին. Միանգամ ընդ միւրդ այսպիսի նամակաց պատասխանած ըլլալու համար, կը յայտարարենք թէ լրագրոյս ընկերութիւնը կամ անոր ո՛ր և է մէկ անգամը կապակցութիւն չունի այդ ընկերութեան հետ, և հետեւաբար ոչինչ տեղեկութիւն կրնանք տալ բառարաններու մասին:

Է. Պալաթ Ընկերութեան հասցեն է՝ 41 Իսթ 69րդ փողոց:

ՆԱԽԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ հասած են հետեւեալ շոգե-նաւերը.

ՍԹ. ԼՈՒՐԵՐ ՍԱՌԹ ՀԱՄԹԸՆԷՆ ՓԼՐԺԻԱ ՀԱՄՊՈՒՐԿԷՆ,

Այսօր կ'սպասուի. ՈՒՄՊՐԻԱ ԼԻՎԸՐՓՈՒԼԷՆ,

Վաղը գալիք. ՀԱ ԿԱՍՓՕՆԵՐ ՀԱՎԻՆ,

ԳՐԻԹԻՇ ԲԻՆԿ ԼՕՆՏՕՆԷՆ ՊՐԻԹԻՇ ԲԻՆԿ ԱՆՎԵՐՍԷՆ,



ՇԱՐԱԹԱԹԵՐԹ ԱՉԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԱՂԱԳԱԿԱՆ

Կը հրատարակուի ամէն Շաբաթ օրնր ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմէն:

Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, ԳԱՆՁԱՊԵՏ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԻԱՅԵԱԿ ԵՄԱՆՅԱՅ ՈՒ ԳԱՆՁԱՊԵՏ ՀԱՄԱՐ

Տարեկան	Տող.	Սէնթ
Վեցամսայ	1	50
Եռամսայ		75
		40

ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Տարեկան 10 Փր. Բաժանորդագրին կանխիկ է: Հասցէ՝

To the DICKRIS PUBLISHING CO., 638 Third Ave., New York City.

ԵՒԻ ԵՆՈՐԲ, ԴԵԿՏ. 11, 1897.

ԱԶԳ

Մեր աշխատակիցներէ կը խնդրենք ու իրենց յօգուածները թուղթի մէկ երեսին վրայ միայն և յատակ գրեն: Եւսկանուն գործածողներն իրենց անունները զրկելու են մեզ, որպէսզի կարենանք իրենց նամակները հրատարակել:

ՔԱՆԱՆԱՅԻ ԽՆԴԻՐՆ

Ազգային Հոգաբարձութեան և քաղաքի Հայաստանայց Եկեղեցւոյ Բաժանայի միջև փոխանակուած թղթ-թակցութիւններն որոց օրինակները մեզ զրկուած էին հրատարակութեան համար, տխուր տպաւորութիւն մը կը ձգեն ամէն ընթացողի վրայ, լինինա Հայ եկեղեցւոյ դաւակ կամ Հայ-բողոքական յարանուանութեան մը անդամ, վասնզի այս միջադէպ կրօնական լինելէ զատ ազգային նշանակութիւն մ'ալ ունի՝ բառին ընդարձակ նշանակութեամբ: Ազգային հոգաբարձութիւնն ինչպէս կը տեսնենք թղթակցութեանց մէջ, քահանան դադրեցուցած է պաշտօնէն դրամի անձկութեան պատճառաւ. իսկ Տ. Վահրամ քահանայ դրամի խնդիր մը չի նկատուր ըսն պատճառն այս այս միջադէպին: Սակայն ինչ որ ալ լինի շարժառիթն այս թղթակցութեանց, մենք՝ ըստ օրինի՝ պարտաւոր ենք զայն ընդունել իբր դրամական խնդիր, քանի որ Հոգաբարձութեան նամակն ի պաշտօնէ կը յայտարարէ այդպէս: Սակայն ընդունելու ենք թէ Հոգաբարձութիւնն պարտաւոր էր ժողովրդին կողմէն ընել, այս ցաւալի որոշումն անցնելէ առաջ, եթէ երբէք այդպիսի դիմում մը եղած չէ արդէն: Եստ զարմանալի է արդարեւ տեսնել թէ Եպիսկոպոս մը բերել տալու յանգրութիւն ունեցող ժողովուրդ մը կը թերանայ այժմէն-քահանայի մը պէտքերն լեցնել: Եթէ Հոգաբարձութիւնը չէ պատասխանատու այս առթիւ բաւական դրամ չի կրնալ գոյացնելու համար, կը մնայ կարծել թէ ժողովուրդն իր հայրենի երկրին հետ իր կրօնն ու եկեղեցին ալ փոխած և գուցէ մոռցած ըլլալու է այս կարծ ժամանակին մէջ:

Հայաստանայց Եկեղեցւոյ դաւակուեց օրինակ տեսնելու են քաղաքիս Հայ բողոքական հասարակութիւնն, որ, հակառակ իր փոքր թուին, ո՛չ միայն երէց մը կը պահէ, այլ և ժողովարանի շէնքին համար վարձ կը վճարէ, որմէ ապա են Հայաստանայց Եկեղեցւոյ դաւակուեց: Յարմար տեղն է մասնաճիւղ ընել հոս Նիւ Ինկլիքնաի Հայրն, որք, բողոքատմամբ թէ և համեստ քսակի տէր մարդիկ կը հոգան սակայն ՉՈՐՍ Եկեղեցականներն ու սեփական եկեղեցին՝ առանց տրտունջի: Չենք կրնար մոռնալ Ֆրէրէզնոն, ուր Հայրն դժուարութիւն մը չունեցան ցարդ իրենց քահանայի հետ: Նիւ Եորքն ու շրջակայքն են սակայն, որք Պատ. Հոգաբարձութեան պաշտօնագրին նայելով՝ անկարող կը հանդիսանան Մէկ քահանայ մը հոգալ: Աւելորդ է ըսն թէ այս պատիւ չի բերեր մեր գաղթականութեան: Եթէ պէտք չկար եկեղեցականի մը, ինչպէս կը կարծեն ոմանք, ինչ ու վարդաբանաց Տ. Վահրամ Բաժանայ, իսկ եթէ կը երին պէտքը անհրաժեշտ էր, հարկ չկար այս միջադէպին:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ Ճօն Պրոնս, Անգլիոյ գործաւորներու բանակին մեծ երեսփոխանը, տարիներ առաջ, օր մը, Լոնտոնի Հայտ Փառքին մէջ միջնամարտ քաղաքութեան մը կը յայտարարէր թէ՝ «բողոքատեղով Անգլիոյ ազգը արեւելքի ազգերու հետ՝ մենք անոր համար մեծ ենք, երջանիկ ենք անոնցմէ, որովհետեւ մենք այս երկրին մէջ կ'ընտրենք, մինչդեռ այդ երկրներուն մէջ կ'ընտրուին»:

Հայերս ալ թուրքիոյ մէջ ամենէն դժբաղդ ազգը լինելով հանդերձ, պղտիկ միջխարանք մը եթէ ունենք անցեալ տարիներուն մէջ, այս էր թէ մեր եզակի անձնաւորութիւններէն մէկ քանին յաջողած էին ձեռք ձգել Հայ ազգին համար Ազգ. Սահմանադրութիւնը Տաճկ. ամենարձանակալ Կառավարութեան, որով գէթ ուղղակի կերպով քիչ մը կը նուազէր թրքական ճնշող միջամտութիւնը մեր Պատրիարքի և Ազգ. վարչութեան ընտրութիւններուն մէջէն: և մի և նոյն ժամանակ կ'ազատուէինք մեր Ջորպաճիներու և Ամիրաներու քամակոյցներէն, որոնց խաղաղը գաղտնի էր ազգի ճակատագիրը: Վերջին տարիները անգործադրելի դարձաւ Ազգ. Սահմանադրութիւնը. Հայրենիքի մէջ, սակայն նոյն Սահմանադրութիւնը մեզ համար նուիրական գիրք մը լինելու է մեր այս օտարութեան կեանքին մէջ, և պէտք է որ անոր ամեն մէկ խօսքը գործադրենք ազատ երկիրներու մէջ, մինչև որ յաջողիք մեր արիւնի գնով աւելլալու ձեռք բերելու Մայր Երկրին մէջ:

Ուստի յառաջիկայ շաբաթ գիրք կատարուելիք Ազգ. Հոգաբարձութեան ընտրութիւնը պէտք է որ մեզ թուի աննշան, անկարեւոր և խաղաղ գործողութիւն մը: Երբ կը հաւաքուինք սրահին մէջ, և անկից առաջ երկրորդութիւնով մը խորհիւնք թէ, տարիներ ի վեր մեր խիղճէն բռնաբարձուած իրաւունքի և պարտքի նուիրական պարտականութիւնները են որ պիտի կատարենք: Երբ մասնաւորաբար յիշենք թէ, մեծ տարրերութիւն մը կայ մեր գաւառական քաղաքներու իշխաններու ստանձնած պաշտօնին և Նիւ Եորքի Ազգ. Հոգաբարձութեան պարտքերուն միջև:

Այնպէս, անոնց գլխաւոր պարտք թերևս իւզազին մուրալու, Սր. Աստուածածնի մոմերը վառելու գրադոմները ըլլան: Այստեղ Հոգաբարձութեան անմիջական և հակա պարտականութիւնն է հոգաբարձութեան թընդու առաջած տարազիր Հայերու նիւթական և մտաւորական յատաճիլումութեան մեծ գործին համար անընդհատ աշխատիլ:

Երբ ընտրենք, ընտրենք այն պիտի սինքր որոնք ճշմարտապէս կարող են կատարելու անթերի և անխալ այս ահագին պարտաւորութիւնները:

ՀԱՅՐ ՂԵՒՈՆՆԻ ԱԼԻՇԱՆ

Նիւ Եորքըր Ըսթաս Յայթուեկ Լըրազրին կը գրեն թէ Վիէնայի Փիլիսոփայութեան Կաճառը Փիլիսոփայութեան Տօքթէօրի պատուոյ աստիճանը տուած է Հայր Ղեւոնդ Ալիշանի: Նոյն Լրագիրը այս առթիւ կաւելցնէ թէ Հայր Ալիշանը ամենանշանաւոր և հմուտ Հայ Կաթոլիկ կղերականն է, ծանօթ ընդհանուր Հայութեան մէջ՝ իւր պատմական, իմաստասիրական և բանաստեղծական հեղինակութիւններով: Հայր Ալիշանի բարձր նկարագրի և անոր Բրիտանական խոնարհութեան վրայ խօսելով կը յայտնէ Գերմանական Լրագիրը թէ, շատ տարիներ առաջ հանրաճանօթ Ալիշանն մտերիմ բարեկամն էր մեծանուն գիտնական Ֆոն Հոմպոլտին, որ օր մը՝ առիթը ներկայանալով ուղած էր իւր բարեկամն ներկայացնել Ֆրէտէրիք Վիլհէլմ շորրերին, բայց Հայ վարդապետը շնորհակալութեամբ հարձարած էր այդ պատիւը վայելել: Հետաքրքրական է գիտնալ թէ Վիէնայի համալսարան Կաճառը Տօքթ Փասթէօրի և Պիգմարք իշխանին ալ ըրած է նոյն պատիւներն՝ ստալով անոնց գիտութեան և Փիլիսոփայութեան Տօքթէօրի աստիճանները:

ՀՈԳԵՀԱՆԳՍԻ ՊԱՇՏՕՆ Ի ՊՕՍԹՕՆ

Անցեալ ամսոյ 28ին Պոսթօնի մէջ Արթ. Սադ վարդապետ Մարգարեան հոգահանգասի պաշտօն կատարել է Սահասօրի նահատակներուն ի յիշատակ: Արթ. Հայրն նոյն երեկոյ ընդհանուր ժողով մը գումարած է Փիլիթըն սրահին մէջ ներկայութեամբ 400ի շափ Հայոց: Ի մէջ այլոց խօսած են այդ երեկոյ Պ. Վահանեան և Արթ. Սադ վարդապետ որ փակած է ժողովն ազգու բանաստեղծութեամբ:

Տղան—Հայրիկ, ինչու այս մեռեալին ետեւէն գացողներն կուլան: —Որովհետև զայն անանկ տեղ մը կը տանին ուր ո՛չ հաց կայ, ո՛չ ջուր և ո՛չ ալ հազուստներ: —Ուրեմն մեր տունը կը տանին զայն, Հայրիկ:

ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՄԻԵՐ

—Իմաստութեան մարդը ասարիներու մարդն է: ԵՐԵՎԱՆ —Իմաստութիւնը ամէն բանէ վերջ կըսկի: ՈՒՆՊԸՍԹԸՐ —Աշխատութիւնը աշխարհի շափ ընդարձակ է, որուն գաղաթը երկինք կը հասնի. ԲԱՐԼԱՅԼ —Բարկութիւնի աւելի ազնիւ է քան վրէժը: ԵՆՏԵՍՏԻՐ —Վրէժը քաղցր է —մանաւանդ կանանց համար: ՊԱՅՐԸՆ —Սխալ է ըսն թէ սէրը կոյր է, կոյր են անոք որք սիրոյ աչքերը չեն տեսներ: —Կինը սիրոյ ինքնակող ներկայացուցիչն է աշխարհի վրայ: —Դէմքը սրտի պատկերն է, աչքը՝ հոգւոյ հայելին: —Եթէ մագերու երկայնութիւնը խելքի կարճութեան նշան ըլլար, կուտ գլուխներն բոլորովին դատարկ կըլլային: —Միաբը դաշտ մ'է, ուսկէ ու չինչ կը փռանի առանց զերմանելու:

ԳԱՆԳՈՅՐՆԵՐ

—Սիրուն ոսկի գանգոյրներ, Ոսկի փայլուն գանգոյրներ, Ան գանգոյրներէն, ա՛հ, մին ինձտուրէր Հայն համբուրէի ցորեկ ու գիշեր, Եւ ցուրտ ձեռքը ժամանակի Հայն սպիտակ ցուրտ արծաթի Չէր փոխեր, Չէր փոխեր: Հայն կը պահէի իմ սրտիս մօտիկ, Ան տեղ կ'արձակէր նշոյլ գեղեցիկ. Եւ ալ մարէին թող մէկիկ մէկիկ երկնից փայլուն աստղիկներ, Ոսկի փայլուն աստղիկներ, Սիրուն աստղիկներ: Եւ ինչպէս սա չէր փոխուէր Նոյնպէս սիրտս կարեմէր, Սիրտս սիրով կարեմէր, Թէ անցնէին իսկ դարեր Չէր փոխուէր, Չէր փոխուէր: ԱՏՐՈՒՇԱՆ

ՅՈՒՍԱՆԱՔ ՍԻՐԱՀԱՐԸ

ԹԵԼԻ ԳՈՐԾԱՐԱՆՆ

Նոր ընկերութիւն մը կազմուած է վերջերս 50 միլիոն տօլար գումարով Միաց. Նահանգաց մէջ գտնուող բոլոր թիւի գործարաններն գնելու և անոնց արտադրութիւններն իրենց ուղած գնով վաճառելու պատակաւ: Այս ընկերութեան մէջ մեծ բաժին ունեցողն է Տ. Փիլիթըն Մօրիլըն՝ քաղաքիս մեծ աշխարհաւոր գումարաւորը: Ընկերութեան գնելիք թիւի գործարաններուն մէջն է Կալիֆօռնիայի Մոնթիլիքըն և Մոնթիլիքըն գործարանը որ կը գտնուի Ուսթըրլենդ գործեն քաղաքիս Հայեր:

Սիրտս լեցուած ալ հեռացայ այդ վայրերէն, որ կարծես ինձ կըսէին թէ «ինչ եղար, ինչու այդպէս կարտատուես»: Ես մեկնեցայ անիծելով այն շար բոպէն դուն յորում ինձ խօսք տուիր իմ ըլլալ, պահել քու խօսք ու խոստում: Թէ և քեզ դէմ աստելութիւն չ'կայ վրէժ սրտիս մէջ, Չի քո բոլոր յանցանքներով պիտի պաշտեմ քեզ անվերջ. Բայց իմ գրիչ պիտ' չի դադրի բառնալ քեզ դեմ շոր բողոք, Անիծելով զմեզ բաժնող քաղաքիս ձեռքերն անողոք: Բայց երբ գրիչն ինչայ ձեռքէս, լեզուս լուէ քեզի դէմ Բողոք բառնալ, կամ մեղադրել քու ընթացքը անխոհմ. Գերեզմանէս յայնժամ ձայներ քեզ դէմ բողոք պիտ' գուան իմ յիշատակ ու պատկերս քեզ պիտ' նեղեն յաւիտեան: Յուսակտուր անուշտ մի օր պիտի զըջաս, ևս գիտեմ Պիտ' դաս ողբալ շիրմիս վրայ անմիթար տխրադէմ, Տաք արտասուօք պիտի թրջես իմ անտերունջ գերեզման Սիրոյդ գրչին պիտի բերես նուէր վարդեր ու շուշան: Բայց ինչ օգուտ իմ ժամանակն անցած կըլլայ այն տեսն, Վերջի քուելով զի աչքեր գոցուած կըլան ապաքէն, Բայց իմ ոսկերք գուցէ յայնժամ ձայն քո դառն տրտասուանց: Թերևս ներեմ գերեզմանէս քու մահացու յանցանց:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՄՐՑՈՒՄ

Նկատելով որ Հայոց մէջ բանաստեղծութիւնը գրեթէ մասնաւոր փափաք մ'ու միտում մը կայ, խըմբազրուութիւնն քաջալերելու համար այս գաւառ վերաբերողները, մանաւանդ ի Միաց-Նահանգս, բանաստեղծութեան մրցում մը կը բանայ այսօր, որ ինքնին նորութիւն մ'է բողոքովին Հայ լրագրութեան մէջ: Այս մրցում պիտի գոցուի երկու ամիսէն: Լուսազոյն բանաստեղծութեանց հեղինակներէն առջի երեքը մասնաւոր նուէրներ պիտի ընդունին ՏԻՊՈՒՄ վարչութեան կողմանէ: Հրատարակութեան արժանի բանաստեղծութիւններն շարաթէ շարաթ պիտի երևին լրագրոյս մէջ:

ՊԱՅՄԱՆՔ

1. Բանաստեղծութիւնը պիտի պարունակեն առ առաւելն 4 տուներ:
 2. Նիւթն պիտի ըլլայ «իմ Սիրածս»:
 3. Բերականական կամ լեզուի սխալներուն երկրորդական կարեւորութիւն պիտի տրուի:
 4. Այս մրցումն մասնակցելու համար մրցակիցը պարտին բաժանորդագրուել լրագրոյս, եթէ արդէն բաժանորդ չեն եղած. և այս առթիւ եղած ծախքերը հոգալու համար, շնորհակալ են մեզ մէջ մի բանաստեղծութեան հետ 10 սէնթի նամակադրով:
- Պայմաններն չի յարգող անձանց բանաստեղծութիւնը նկատի չեն առնուիր:

Գ. ՀԱՆՆԵԼՈՒԿԻ ՄԱՍԻՆ

Մեր երրորդ հանելուկը լուծած են նաև հետեւեալ անձինք. Օրիորդ Ազնիւ Մ. Բարակեան, Տրք. Յ. Պարզաբան, Սէ-Եջ, Միշտա Հայրապետեան, Ն. Մկրտիչեան, Կ. Թայեան, Արմենի Գարուսիւնեան, Օննիկ Սէմէրեան, Միհրան Լուրեան, Կարապետ Յովհաննէսեան, Յ. Փափազեան, Յակոբ Մասոյեան, Գ. Մէլիստեան, Պ. Պալոյեան, Պարտաւար Իսպիրեան, Բարսեղ Բաւճեան, Հայկ Սիմսարեան, Յովսէփ Գալուստեան, Սողոմոն Գաղանճեան, Արտաշէս Բէօլէեան, Գիտակ Ճէլալեան և Յովսէփ Աշճեան:

ԼՈՒԾՈՒՄՆ Գ. ՀԱՆՆԵԼՈՒԿԻ

Մալաթիացին կ'առնէ	24
Սերասիացին	26
Սարգիսիացին	30
Տ. Կեթեօսեան	40

ՊԱՅՄԱՆՔՆԵՐ

1. Մ. Պոսթըն—Ձեր լուծումը ուղիղ է, բայց մրցանակը ձեզմէ առաջ լուծողներն առած են:
2. Ա. Ս. Նաչուէ—Ձեր նամակը չենք կրնար հրատարակել, հրատարակային վիճարանութեան տեղի չի տալու համար: ՏԻՊՈՒՄ ընկերութիւնն հրատարակելիք բաւարաններու մասին բան մը չի կրնար ըսել:
3. Ա. Լ. Պոսթըն—Նոյն:
4. Թ. Պ. Նիւ Եորք—Ձեր լուծումը ուղիղ է. ուրիշ պատասխանի պէտք չ'կայ:
5. Մ. Թրոյ—ՏԻՊՈՒՄ սիւները բայ են ժողովրդի առջև. գրեցէք: Ընտրութեան իրաւունքը խմբագրութեան կը վերաբերի: Լուրեր հարգողներէք ձեր կողմի Հայոց վրայ:
6. Ս. Փրովիան—Ձեր ունեցածներն կրնաք զրկել. եթէ յարմար դատենք, կը գործածենք սպազային:

Ի պատու կարօտ ընտանիքին հանգանակուած դրամի հաշիւը յաջորդելու:

Տիկին Բ.—Տէր Հայր, ինչ ընեմ սա աղջիկս պատուահանէն ներս գայ. Տէրտէրը—ամուսնացուր:

ՆԱՄԱԿ ՀՈԳԱՐԱՐԾՈՒԹԵԱՆ

Նիւ Եորք, Դեկտ. 4, '97

Տէր Նմբազիր, Բարեհաճեցէք պատ. թերթիդ մի անկիւնը գետեղել յետագայ պաշտօնագիրը:

Ընդունեցէք յարգանքներս ի դիմաց Հոգաբարձութեան ԱՆՏՈՆ ԹԱԳԻՈՐԵԱՆ (Կնիք) Ատենադպիր

Ազգ. Հոգաբարձութեան ժողովը որ տեղի ունեցաւ երեկ երեկոյ ընդ նախագահութեամբ Գեր. Տ. Վաղինակ վարդապետ Սիսակեանի, այլ և այլ կարևոր խնդրոց առթիւ խորհրդածութիւններ կատարեց, իմիջի այլոց որոշեց հետեւեալ պաշտօնագիրըն ուղարկել առ Արժ. Տ. Վահրամ քահանայ Մարտիրոս:

Արժանապատիւ Տէր Հայր, Հոգաբարձութիւնն ցաւօք սրտի կը գայ Ձեր Արժանապատուութեան ծանուցանել, թէ զբամական ներկայ անձկութեան պատճառաւ և թէ համոզուելով որ կարելի չ'պիտի ըլլայ հանգանակութեամբ և կամ ո՛ր և է մի եղանակաւ իւր ծախքերը հոգալ, մեծամասնութեամբ որոշեց Ձեր Արժանապատուութեան ծանուցանել թէ այսուհետև Հոգաբարձութիւնն Ձեր շարաթականը վճարելու պատասխանատուութիւնը շտանձնել, բայց Ձեր պաշտօնավարութեան ալ արգելք չի դառնար, եթէ յօժարակամ նուիրատուութեան վստահելով յարատեւեց ցնոր ընտրութիւն, որ մինչև 98 Յնվր. 1ին տեղի պիտի ունենայ:

Աւելորդ չենք համարել յիշել թէ Ձեր պաշտօնավարութեան ժամանակէն առաջ Ձեզ փոխ տրուած 139 տարիի հաշիւը կարգադրելու իրաւունքը մեզ վերապահուած է:

Մնամ յարգանք ի դիմաց Հոգաբարձութեան ԱՆՏՈՆ ԹԱԳԻՈՐԵԱՆ (Կնիք) Ատենադպիր

Արժ. Տ. Վահրամ Բահանայ Մըսրիլեան շարժուած մէջ մի առանձին նամակաւ բողոքած է Հոգաբարձութեան իրեն այս ընթացքին համար, պնդելով թէ այդ պարագայից տակ Ազգ. Հոգաբարձութեան իրաւասութեան վեր էր եկեղեցին փակել առանց կանխաւ ժողովրդեան դիմում ընելու, քանի որ դժուարութիւնը լոկ դրամական խնդիր մ'էր. և որոգնեալ ժողովուրդն էր դրամ տուողը, Արժ. Վահրամ Բահանայ Կը պնդէ թէ ժողովուրդն ըլլալու էր այս կարևոր վճիռն տալու ձեռնհաս մարմինը, և ո՛չ թէ Հոգաբարձութիւնը: «Ս. Եկեղեցին առանց ժողովրդի գիտակցութեան փակելով, կըսէ նամակն, կուզէք պարզապէս համոզում գոյացնել ժողովրդեան մէջ թէ Եպիսկոպոս մը բերելու կարողութիւն չունիք, քանի որ պարզ հանայ մը չէք կարող պահել: Բայց այս կերպը չէ ժողովրդեան փափաքը մարելու համար, որ Եպիսկոպոս մը ուզած ասան անոր ծախքերն հոգալու պարտականութիւնն գիտէ»: Եկեղեցին փակուած ըլլալուն համար ժողովրդէն տրուանք լրամ լիջնով Արժ. Վահրամ Բահանայ նոյն նամակաւ եկեղեցոյ գոյից բանալիներն յետո կը պահանջէ կրօնական պաշտամունքն շարունակելու համար, ց'ընտրութիւնն որ հոգաբարձութեան, վստահ ըլլալով այս առթիւ թէ «Ժողովրդին մէջ կղերք նստի չի մնար»:

—Վաղինակ իշխանն կրսն թէ հազուա մը երկու անգամ է աւելի չի հազնիր:

—Ատոր մէջ զարմանալի բան մը չ'կայ, շատեր իրենց հազուա մէկ անգամէն աւելի չեն հազնիր, սա տարբերութեամբ որ այս վերջնոց «մէկ անգամը» աւելի երկայն է:

ՑԱՆԿ ԸՆՏՐԵՆԵԼՆ

Նոյ. 27ի երեկոյեան ընդհանուր ժողովին մէջ ընտրուած Անուանիչ Յանձնախումբն հետեւեալ եռապատիկ անուանց ցանկն պատրաստած ու յղած է Ազգ. Հոգաբարձութեան:

- Տրք: Յ. Թալչանճեան
 Պ. Իսպիրեան
 Յ. Գնդուհի
 Յ. Ղուկասեան
 Տ. Բէլէլեան
 Պ. Յակոբեան
 Յ. Հիւրմիզ
 Յ. Բըզլըքէշիչեան
 Պ. Բիւրքեան
 Ա. Գրգուրեան
 Գ. Կարմանեան
 Պ. Սարսուրեան
 Յ. Եարտըմեան
 Ս. Յովսէփեան
 Մ. Չուխարչեան
 Թ. Պարտիզպանեան
 Թ. Բիւրիշեան
 Պ. Շալճեան
 Մ. Գարակեօզեան
 Ա. Շիշմանեան
 Թ. Չարաֆճեան

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Նիւ Եորք, Դեկտ. 1, '97
«Բարձրաստիճան կղերականի մը պէտքը պէտքութիւն չունի ազգային շինութեան կարևոր մասերն կազմող Նիւ Եորքի գաղթականներու համար» այսպէս կը յայտարարէր Գեր. Տ. Վաղինակ Թ. Վ. Սիսակեան, անցեալ շարաթ երեկոյ տեղի ունեցած ընդհանուր ժողովոյն մէջ, մեզ սոյն գաղափարն ներշնչելով թէ «Նիւ Եորքի Հայերն Պոսթընի, Փրովիտէնսի և Ուոթըրի շափ զարգացեալ չեն:

Իրաւ որ մենք շատ թերութիւններ ունինք մեր ազգային և եկեղեցական պարտականութեանց մասին. անոր ալ պատճառն ո՛չ այլ ինչ է, բայց եթէ բարձրագոյն և ազդեցիկ կղերական մը չունենալն է: Իսկ եթէ կը կարծուի որ Հայերու մտաւորապէս և բարոյապէս չը զարգացեալ անհատներ կը կազմեն Նիւ Եորքի գաղթականները, այդ բողոքովին սխալ է:

Միայն մեր ազգային գոյութիւնն և Հայաստանեայց եկեղեցոյ պատիւնն ու անունը պաշտպանելու համար էր որ կարևոր կը համարուէր գոնէ քահանայէ մը կամ վարդապետէ մը բարձր մի հոգևոր կարող անձնաւորութիւն ունենալ, որ զմեզ յեղաշրջելով արմատախիլ անէր այդ փուշեր ու տատակները, որք որք օր կաճին մեր շուրջը, ի շնորս օտարամոլ բաղդախնդիրներու:

Բայց երբ ժողովոյ ներկայ գըտնուեցայ, ընդհակառակն ցաւ զգացի ի սիրտ, որ փոխանակ քաջաբերուելու ընդհակառակն լաւ մը յանդիմանուեցանք, անգործադրելի և անընական համարուելով մեր պահանջը:

Իրաւ որ Հայր Սիսակեանի քարոզն մեծ ազդեցութիւն ունեցաւ հասարակութեան վրայ, և մենք Հայերս որ յուսալից էինք, յուսախափ եղանք, ու Հոգաբարձութիւնը անգիտակից Հանդիսացաւ իրեն գիտակցութիւնով ու կրիքով առաջ եկած խնդրոյ մասին:

Բայց մենք միթէ անիրաւ ենք մեր պահանջներն մէջ. միթէ կարելի չէ մեզ իրագործուած տեսնել մեր փափաքները:

Ճշմարիտ խոնարհութեամբ Հայր Սիսակեանի Սբ. աջն համբուրելով կը հարցնեմ, ին՞չ ընելու ենք, ին՞չ ընելու ենք, երբ Ո՞վ ՊԻՏԻ ԱՌԱՋՆՈՐԴԷ ՄԵՉ:

ՍՈՒՐ—ԵՐԿԹԱ

Նմբազիր ՏԻՊՈՒՄ,

Հաճեցէք թոյլ տալ ինձ Ձեր ժողովրդական «Թերթի» մէջ իմ անհատական կա ծիբներս յայտնել մի այնպիսի խնդրոյ վրայ որն այժմ Հայ Գաղթականութեան մեծամասնութեան խօսելու նիւթ դարձած է:

Միքանի տարիներէ իվեր Ամերիկայ' մանաւանդ Նիւ Եորքի մէջ բնակած լինելով, առհասարակ հետամուտ եղած եմ Ազգայնական ամեն պայքարներին և կռիւներին. ինչ պիտիք են «Կրօնական և Կրօնական» պատահած դէպքերն: Կրօնական կռիւները համոզուած լինելով որ «Կրօնական» խնդիրները հետ կապ չունին. այժմ անցնիլիք այդ հարցի վրայէն, և խօսիլք այն խնդրի վրայ զոր կապուանայ Հայ Գաղթականութեան նիւթականին և բարոյականին:

Ժամանակ մը Հայ գաղթականներու գրեթէ շատ քիչեր կ'զբաղէին Կրօնական հարցով: Սակայն մի տարիէ ինչ այդ հարցը դարձեալ երևան եկաւ. և այժմ ժողովրդական ամէն շրջանակներէ մէջ կը տեսնես «Եկեղեցոյ» «տէրտէրի» «վարդապետի» «պահել—չպահել» ի խնդր, վէճեր, և կռիւներ:

Պօլոյ և Հայաստանի կոտորածներն առիթ կամ պատուակ ընելով ըրենց, փրթողը Ամերիկայ կը վազէ, ինչո՞ւ, պատասխանը խիստ որոշ է. ապրելու. լաւ, բայց անոնցմէ մէկը խորհի թէ Հայ Գաղթականութիւնը բաղկացած է պարզ և խեղճ դործաւորներէ. որոնցմէ շատերը շաբաթներով և ամիսներով թափառաւրջիկ փողոցներն կը դառնան գործ գտնելու յուսախափութեամբ թէ իրենց հոս գալիս արդէն կողոպտուած ժողովրդի դատարկ քսակին վրայ ծանրանալն, խղճի գէ՞մ գործուած ամենէն մեծ սխալներէ մէկն:

Չարդերէն առաջ երբ Հայ կղերականները թիւր այսչափ չէր, հոս եղողներն կարելի եղաւ ըստ արժանոյն հոգալ. բայց հիմայ ասոնց թիւը շատցած է և ժողովուրդը հազիւ իր թախուած ընտանիքին կրնայ օգնել, սկսած է անտարբեր մնալ դէպի կղերականը ինչպէս շատ անգամներ այս անգամ ալ փորձը ցոյց տուաւ այս ճշմարտութիւն:

Անցեալներ Նիւ Եորքի քահանային համար կազմուած Հոգաբարձութիւնը Արժ. Տ. Վաղինակ վարդապետը Նիւ Եորք կը հրաւիրէ Կրօնական ժողովի մը խօսելու համար: Ն. Արժանապատուութեան գալը և 2 օր մը նալ երթալը 50 տարի կը լինի, և խեղճ գործաւորներէ կը հաւաքուի և կը տրուի այդ գումարը, որպէսզի «վարդապետը» չ'նեղուի, չը սրդողի ևն.:

Ստոյգ աղբիւրէ կը լսենք թէ մի շարաթ յետոյ դարձեալ վաղինակ և Մաշոց վարդապետները Նիւ Եորք պիտի գան հոգաբարձութեան և «Տէրտէր» ի մէջ պատահած կռիւները վերջացնելու. տեսնենք այս անգամ քանի 50 տարիներ ծախք պիտի ընեն այս առթիւ:

Այս պարագաներն ստեղծողն թէ և ինքը ժողովուրդն է, բայց կը ծանրանայ աւելի զարգացած և խելացի երիտասարդները վրայ, որ թողուն ժողովուրդը այսպէս չարաչար խարուելու:

Հայ Նղբայրներ, լուրջ, միանգամայն քննական ոգով Հայեցէք դէպք ձեր կղերականը, եթէ կարող են ձեզ գոհացում տալ, պատճեցէք զանոնք:

ՇԱՆԹ

ՄԱՆՐԱՆՈՒՐԻ

—Դեկտ. 19ին Արժ. Տ. Մաշթոց և Վաղինակ Վարդապետները, կը ԼԵ. անը թէ քաղաքս պիտի գան նոր Հոգաբարձութեան ընտրութիւնն կատարելու համար:

—Անցեալ շաբաթ երեկոյ Գարբերդցի Պ. Կիրակոս Սաշատուրեան ամուսնացաւ Օր. Իսկուհի Սարգիսեանի հետ, կնքահայրութեամբ Տ. Կ. Տէր Գրիգորեանի: Անցեալ երեքշաբթի օր, նմանապէս, քարբերդցի Պ. Պ. Մուրաբեան ամուսնացաւ Օր. Սառայ Յովսէփեանի հետ, կնքահայրութեամբ Տիար Աղաբեկեանի: Այս պատկի արարողութիւններն կատարեց Արժ. Վահրամ քահանայ:

—Անցեալ երեքշաբթի Գարբերդէ հասան 23 նոր գաղթականներ: Ասոնք Գարբերդը թողուցած ատեն 47 հոգի էին, որոց 24ը Մարտիրոս միացած են:

—Լոնտոնի մէջ Պ. Արիիար Արիիարեան «Նոր Կեանք» անուն հանդէս մը պիտի հրատարակէ:

—Կը լսենք թէ Կաթողիկոսեան մի կոնգրակի հրամանին համաձայն, Արժ. Տ. Վաղինակ և Մաշթոց Վարդապետները Միացեալ Նահանգները երկու մասերու բաժնած են հովուելու համար: Չի գիտցուիր թէ նիւ երբք որու թեմն պիտի ըլլայ:

—Պատ. Հայկ Ատատուրեան Մանուէթի ժողովական եկեղեցւոյն երէց ձեռնադրուած է:

—Չարչանձաղի Բերրի գիւղաքաղաքէն գրուած նամակ մը կը պատմէ թէ իբր մէկ ամիս առաջ երկու երիտասարդներ, Նալբանդեան և Սեւեան այգի գնացած ատեն թուրքերու կը հանդիպին, որք բռնելով զնալբանդեան ականջները կը կտրեն: Հըրաշք մ'է որ գլուխն ալ կտրած չեն խնդճ երիտասարդին:

—Անցեալ կիրակի օր տեղի ունեցաւ ի ձէջրի Ազգ. Հոգաբարձութեան լսարանի ժողովը, որոյ ատեն նապետեց Պ. Չարչանձաղեան ներկայութեամբ 100ի չափ երկսեռ ազգայնոց: Խօսեցան Արժ. Վահրամ քահանայ, Տ. Զեթ. Գարբիէիան և Թէոտորեան: Օր. Բոգինա Մարաֆեան մի անգլիերէն, Պ. Գէորգ Մարեան և Օր. Մ. Մարեան հայերէն մէյմէի պատմաբարտասանեցին: Այս ժողովի մէջ որոշուեցաւ կտոր մը հող գնել՝ անոր վրայ Ազգային շէնք մը կառուցանելու համար: Այս որոշման գործադրութիւնն յանձնուեցաւ Հոգաբարձութեան, որոյ օգնական ընտրուեցան Կիրակոս եղբարք և Տ. Զեթ. Թէոտորեան:

—Պ. Սարգիս Յովսէփեան մի նոր փուռ ևս բացած է առաջին Արժ. նիւի վրայ:

—Պոսթօնի մէջ Գլոնտայք երթալու փափաք ունեցող Հայ մը ինքզինքը ցուրտի վարժեցնելու համար մի քանի ցուրտ գիշեր մերկ և առանց վերմակի փորձած է քնանալ և հիւանդացած է:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Նիւ երբք, Դեկտ. 2, 97. Խմբագրութիւն ՏԻԳՐԻՍԻ, Մալթիացիներու մէջ տեղի ունեցած կռիւն նկատմամբ գրուածները կարդալով՝ ՏԻԳՐԻՍԻ ընթերցողները այն հասկացողութեան պիտի գան թէ, Օհաննէս Տատայեան անուն անձն ալ երկար ատենէ ի վեր մէկ մէկու դէմ թշնամութիւն ունեցող անձինքներէն մինն է, թէ՛ կըռուելու աւելի լայն ասպարէզ մ'ունենալու համար յատկապէս փողոց ելած է, թէ՛ Օհաննէս Տատայեանը վատարար բռնած է Պետրոս Գարուսուզեանը որպէս զի Օհաննէս Աւշարեանը զմեկիով հարուած է զայն, թէ՛ Տատայեանը իբր ոճրագործ մը ձեր-

բակալուած և բանտարկուած է ևն.:

Առանց երկարելու իմ պատիւս րատաւորող այս պարագայցը համար տալիք պատասխանս, հակիրճ կերպով կը յայտարարեմ թէ՛ ևս, այդ մէկմէկու հետ թշնամութիւն ունեցող անձինքներուն և ո՛չ մէկին հետ հակառակութիւն կամ թշնամութիւն ունեցած չեմ բնաւ թէ՛, տեղի ունեցած կռիւն մէջ ևս ո՛չ մէկին օգնած չեմ, այլ կռիւք արգելելու աշխատած եմ միայն թէ՛, զիս ոչ թէ իբր կռուող կամ ոճրագործ, այլ պարզապէս կռիւն մէջ արգելիչի դեր կատարած ըլլալուս համար ձերբակալուած է ոստիկանութիւնը, և թէ իմ անպարտութիւնս արդէն ապացուցուած է գատարանին մէջ:

Իսկ գալով այն տեղեկութեան որով իբր թէ «տեղւոյս մալթիացիները իրենց մէջ հանդանակութեամբ մը պիտի հոգան ծախքերը», բոլորովին անհիմն է այս լուրը. վասնզի Տատայեան ինքն անձամբ հոգացած է իւր գատական ծախքերը:

Կը յուսամ թէ ՏԻԳՐԻՍԻ պատուական խմբագրութիւնը պիտի բարեհաճի ուղղել այս սխալ կէտերը, որոնք անձի մը պատիւը կրնան արատաւորել:

ՕՀԱՆՆԷՍ ՏԱՏԱՅԵԱՆ

ԿՈՒՋՈՒԻ

Տարեքը առած Հայ կին մը կուզուի յիւստիքը 5 երիտասարդաց համար սուս պահելու պաշտօնով: Փափաքողք պարտին դիմել ՏԻԳՏԻՍԻ Խմբագրութեան:

—
Հայ կին մը կամ աղջիկ մը որ կերակուր եփելու և տնական առօրեայ գործերու վարժ է:
Դիմել անձամբ և կամ նամակով երկուշաբթի, Դեկտ. 13ին:
81 ԻՍԹ 116րդ Փողոց, Ն. Ե.:

ԱՋԻ

Պատիւ ունինք ծանուցանել թէ ՏԻԳՐԻՍԻ տպարանին մէջ կը տպուի, ծանուցումներ, այցետոմս, տնտեսական և այլ ամէն տեսակ գործեր, գոհացուցիչ գնեցող: Մեր տպարանին մէջ տպուած աղագային և կրօնական հրատարակները կարտասպան են ՏԻԳՐԻՍԻ մէջ առանց աւելորդ ծախքի:

ԱՊ Ա Հ Ո Վ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Չմբան եղանակին հետ կսկսին հարբուղիս, սոմաթիզմ և կարգ մը թոքային հիւանդութիւններ երեան գալ: Նորուեկեան ձկան իւղը անհաշտ թշնամի է վերոյիշեալ հիւանդութիւններուն: Ե՛րբ 25 և 45 սէնթի կը ծախուի Հայկական դեղարանը: Փորձեցէ՛ք:

ՈՒԻՆՏՉԸՐ ՏՐԸԿ ԸՍԹՕՐ,

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԵՂԱՐԱՆ,

472 Յրդ Աճիւր, Նիւ երբք:

Ե.Տ.ՍՏԵՓԱՆԵԱՆ պատիւ ունի ծանուցանել թէ դեղագիրներ կը պատրաստէ խիստ աժան գիներով:

ՅՈՎ ՀԱՆՆԷՍ Գ. ԽԱՉԵՐԵԱՆ

Ժ Ա Մ Ա Գ Ո Ր Մ

Թիւ 388 Յրդ Աճիւր, Նիւ երբք:
Կը նորոգէ, խիստ չափաւոր գրեցողով, պատի և գրպանի ամէն տեսակ ժամացոյցներ: Բոլոր դիմողներն գոհ պիտի մնան:

Վ. ՃԻՆԻՇԵԱՆ

Եր ծանուցանէ թէ գեա կը շարունակէ իւր գիշերային գպրոցը միևնոյն տեղը:

Ս. Ր Օ Ջ Է Ն Ս Ո Ւ Է Կ

ՎԱՃԱՌՆԵԱՆ

Դերձակի վերաբերեալ ամէն տեսակ ապրանքներ. մետաքսեայ օրնգուս, ազլըբուս, թաւիչ, կոճակ և այլն, խիստ աժան գնեցող: Հայ դերձակներուն համար մասնաւոր զեղջ, եթէ ՏԻԳՐԻՍԻ ցոյց տան:

72 ՕՐՉԸՐՏ ԸՍԹՐԻՏ, ՆԻՒ ԵՈՐԻ

ՃԷՅՄԸՍ ՍԱԿԸՐ

Վաճառական ամէն տեսակ ընտիր սուսեղէններու, խիստ գոհացուցիչ գնեցող: Հայ դերձակներ կըրնան իրենց սուսեղէնները գնել այս սուսեղէն շատ աժան գնեցող:

246 Գանալ Ըսթրիթ

Ե Ր Ե Կ Ո Յ Ե Ա Ն Դ Պ Ր Ո Յ

Ա Ն Գ Ղ Ի Ե Ր Է Ն Ի

Ո՛ր և է Հայ կրնայ դերձամտչելի գնեցող ուսանիլ Հասարակ ընթերցանութիւն, Սուսեղէնութիւն, Նամակագրութիւն, Տոմարակալութիւն, թուարանութիւն, Առեւտրական գիտելիք, Գեղագրութիւն, ևն. ևն.:

Դպրակ կուսնդուին մասնաւոր խնամօք և բոլորովին առանձին: Մանրամասնութեանց համար դիմել ՏԻԳՐԻՍԻ խմբագրութեան:

Ռ. Ե. ԱԼԹՈՒՆԵԱՆ

Դասատու

ԿՕՇԿԱՎԱՃԱՌ ԵՒ ԿՕՇԿԱԿԱՐ

239, ԻՍԹ 26րդ. Փողոց, Ն. Ե.


Ամէն տեսակ կօշիկներ թէ արանց և կանաց, թէ աղջիկանց և սղայոց, կը վաճառենք չափաւոր գնեցող: Կը կարենք ապարուած նոր կօշիկներ ու կը նորոգենք հիւստ վայելուչ կերպով:

Ա. ԹՕՓՈՒՉԵԱՆ

ՄԵՐ ԿՏՐՈՆԵՐԸ


ՏԻԳՐԻՍԸ Հայ գաղթականութեան մէջ տարածելու համար վարչութիւնս որոշած է կտորն մը հրատարակել թերթիս երրորդ երեսին վրայ Չ. սէնթի արժողութեամբ, և իբր գրամ ընդունիլ զայն՝ փոխարէնն ի ստորեւ ծանուցուած ապրանքներէն նուէր տալու պայմանաւ, իրենց որոշեալ գնեցող: Այս կտորններու գինն քանի մը շաբաթէն մտադիր ենք 1 սէնթի իջեցունել: Անոնք որ կուզեն օգտուիլ այս բացառիկ առիթէն, աշխատելու են ձեռք ձգել ՏԻԳՐԻՍԻ այս կտորններէն որչափ որ կարելի է, ու պահել զանոնք:
Ամէն 10 կտորնի հետ 2 հատ 2 սէնթնոց նամակագրող մը զրկուելու է մեզ ապրանք փոխադրութեան ծախուց համար:

Աժան տեսակներ ունինք,




ԲԱՅՑ ՍԱ ԿԱՐԺԷ 1 ՏՈՒ 75 ՍԹ

ՈՍԿԵՊՍ ՏԱՄԱՑՈՅՑ



ԳԻՆ. 7 ՏՕԼ. 85 ՍԷՆԹ.

ԿԱՂԱՆԴՉԷՔԻ ՆՈՒԷՐ




ՀԱՏԸ 1 ՏՕԼ.—50 ՍԷՆԹ.

ՄԵՐ ՆՈՒԷՐՆԵՐՈՒ ՄԷՋ


Արանց և տիկնանց համար յատուկ զմեկիներ, մատանիներ, զանազան կրճակներ ևն. բոլորս սուս և լ.:

Այս զմեկիին հաւար միայն



ԿԱՐԺԷ 85 ՍԷՆԹ.

ԱՅՍ ԿԱՆԱՆՑ ԱՍԵՂՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ



պէտք չէ բացատրութիւն: Կանայք



գիտեն անոնց կարեւորութիւնն: ԿԱՐԺԷ 52 ՍԷՆԹ